

ը) Aramali իբր մայրաքաղաք (!) Արամէի յիշած .

զ) Խորենացու ո՞ր գրքում եւ ո՞ր գլխում է կարգացել պարոնը, որ սքըպն « Ան նորոգած է Յուսպան եւ իր անուամբ Վան անուանած զայն » : Ի՞նչ անիրաւացի զբարատութիւն մեր « պատմահայր », նոր երգուեալ պաշտպանողի կողմից . . .

Նախ ինամբով ուսումնասիրել մեր ազգային մատենագրերը եւ ապա ձեռնարկել « փորձերի », շատ օգտուէտ կը լինէր Պ. Բանասերին, եթէ նա չկամի, որ իւր երկերը իրենց տգիտութեամբ զուարճանքն ընթերցողին :

Այս նմոյշներից յետոյ մեզ իրաւուք կը համարենք կրկնել, որ Մկննակ Բանասերի « Հայոց Պատմութիւն »-ի շնորհիւ իւր խոշոր պակասութեանց՝ զուրկ է որ եւ է զիտական շնանակութիւնից :

Գիտութիւնն հիմնած չէ անհասի միայն ցանկութեան, այլ նախ եւ առաջ նորա ընդունակութեան, կոչման եւ մասնազէտ պատրաստականութեան վերայ, յապտութիւնք՝ որոնցից զուրկ է Սկանակ Բանասեր :

ԱՅՆՍԻՆՆԻՆ



Յ Ե Ս Ե Ս Ե Ս Ե Ս Ե Ս

Թ Ղ Թ Ո Վ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՈՒ « ՆԱԿԻՍ », ՄԵԹԱՅՐԳ ԽՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Կարգալով « Բազմավէպի », 1904 թ. Օգոստոսի համարում Սկանակ Բանասերի իմ դէմ ուղղած թղթակցութիւնն, որով պարոնը՝ առանց գաղտնիք ունենալու. թէ արարելն եւ թէ գերմաներէն լեզուներ մասին թող է տալիս իրան պնդել, թէ իմ « Արարացի մատենագիրք Հայաստանին մասին », տակաւին չաւարտած գործս լով « Թարգմանութիւն մ'է այժմ և. Պոլսոյ մէջ ապրող Տօբթոր Մորթմանի հօր՝ Նանօթ արեւելագէտ, Հայագէտ (?) եւ սեպագրագէտ (?) Տօբթոր Մորթմանայ՝ գերմաներէն լեզուաւ հրատարակած մի գործէն » (գործի անունն պարոնը սակայն չի յիշէ!), պատիւ ունիմ յայտարարելու, որ վերոյշիւնալ Պր. Մորթման թայլգմանած չէ Բելազօրի (որ երկիս Ա. մասի նիւթն կը կազմէ եւ իմ քրտնաջան աշխատանաց արդիւնքն կը հանդի-

սանայ), այլ կեղծ Վակիդիի (Pseudo al-Vakidi) պատմական Նշանակութիւնից զուրկ գործի Նիբուրի ձեռքով թարգմանութեանն (որի համառօտ բաժանդակութիւնն եւ նոյն իսկ առաջ եմ բերել « յառաջալսանք » մէջ եւ յիշել նորա գերմաներէն թարգմանութեան վերնագիրը) կցել է Յաւելուածք եւ Միջնութիւնք, (երկի ամբողջ վերնագիրն է՝ Geschichte der Eroberung v. Mesopotamien und Armenien von Mohabed ben Omar el Wakedi. Aus dem Arabischen übersetzt und mit Anmerkungen begleitet von B. G. Niebuhr. Mit Zusätzen und Erläuterungen von Dr. A. D. Mordtmann. Schriften der Akademie von Ham. Erster Band, III. Abt. 1847): Գերմաներէն կարգալ սովորել շատ օգտուէտ կը լինէր քաջ քննադատին :

Չգիտեմ, ինչ՞ վերագրել Սկանակի այս « տախան », զբարտառութիւն. արդե՞ք նորա ցանկութեանն (Պարոնը կ'երեւի հանգիստ չունի նորա թոյլ գործի վերայ « Հանդիսում » գրած քննադատութիւնիցս յետոյ)՝ փաստեր ինարդակսել իմ դէմ, թէ նորա տղիտութեանն : Ով ինչպէս կամի :

Սնհիմն է նաեւ Պ. Բանասերի միւս համարձակ նկատողութիւնն, թէ ես « արարելնի տեղեակ չեմ », քանի որ ես տարիներէ ի վեր Sachau եւ Barth համառաւոր արարագէտ ուսուցչապետաց աշակերտն լինելու պատիւն ունեցած եմ : Պարոնը սխալ զուռ է բախել :

Ցանկալի էր, որ նման յանդուգն « նկատողութիւնք », ըլլին կշռուած եւ հիմնաւորած լինէին, նախ քան մեր մտնուի էշերը մրտտելն :

Մենք կը պահանջենք Պր. Տաղաւարեանից՝ բարութիւն ունենալ փաստերով ապացուցանել մեզ իւր՝ միայն իրան եւ իւրայիններին յատուկ զբարտառութեան երկուկէտերը եւս, հակառակ դէպքում նա երբեք չի սրբէ իւր ճակատից այն անունն, որին նա արժանացել է նորոհի իւր . . . կեղծիքի :

Բ. ՆԱՍՍԻՆՆԻՆ

